ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ,

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՎ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՐԿՐԻ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՀԵՌԱԶՆՆՄԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՄԻՋԵՎ

ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արբանյակային պատկերների կիրառման ոլորտում համագործակցության մասին սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ «Հուշագիր») նախագծվել և կնքվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի (այսուհետ՝ «Կոմիտե»), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ «ՀՀ ԳԱԱ») և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բնական պաշարների նախարարության երկրի արբանյակային հեռազննման կիրառության կենտրոնի միջև (այսուհետ՝ «ԵԱՀԿԿ»), (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»):

Կողմերը բարեկամական խորհրդակցությունների արդյունքում ձեռք են բերել հետևյալ փոխըմբռնումները.

ՀՈԴՎԱԾ I

ՆՊԱՏԱԿԸ

Սույն Փոխըմբռնման հուշագրի նպատակն է աշխատանքային հարաբերություններ հաստատել Կողմերի միջև երկրի արբանյակային հեռզննման տվյալների և տեխնոլոգիաների կիրառման ոլորտում՝ հավասարության, փոխադարձության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ II

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Կողմերի միջև համագործակցության ոլորտները ներառում են.

1. Հանգույցի կառուցում.

   ա) ԵԱՀԿԿ-ն Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսների արբանյակային 2 մետր լուծաչափով, սենսորով ճշտված տվյալներն անվճար կտրամադրի ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեն և ՀՀ ԳԱԱ-ին ներկայացնող ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտին բնական ռեսուրսների արբանյակային հեռազննման ամպային ծառայության հարթակի միջոցով,

   բ) թույլատրվում է արբանյակների տվյալների ոչ առևտրային նպատակներով օգտագործում և տարածում. արբանյակային տվյալների առևտրային նպատակներով օգտագործումը և տարածումը փոխադարձաբար կհամաձայնեցվի Կողմերի միջև գրավոր եղանակով,

գ) ԵԱՀԿԿ-ի կողմից տրամադրվող անվճար տվյալները կդադարեցվեն Հայաստանի Հանրապետության ամբողջական տվյալների տրամադրումից հետո՝ Հուշագրի ուժի մեջ լինելու ընթացքում: Հետագայում տվյալների տրամադրման պայմանները կփոխհամաձայնեցվեն, և Կողմերի միջև ձեռք կբերվեն առևտրային համագործակցության վերաբերյալ գրավոր համաձայնություններ:

դ) ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեն և ՀՀ ԳԱԱ-ն կտրամադրեն տեղեկատվություն՝ բնական ռեսուրսների արբանյակների տվյալների կիրառման կարգավիճակի և դրանց օգտագործման վերաբերյալ:

2. Բարձր լուծաչափով հեռազննման տվյալների մշակում, համատեղ չափորոշում և արդյունքների ստուգում:

3. Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսների արբանյակային պատկերների հիման վրա 1:25,000 և 1:50,000 աշխարհատարածական տվյալների ստեղծում և թարմացում:

4. Աշխարհատարածական տեղեկատվության վերհանում և փոփոխությունների հայտնաբերում հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ:

5. Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային պաշարների պահպանման, հողային ռեսուրսների կառավարման, քաղաքաշինության, էկոլոգիական միջավայրի, աղետների կանխարգելման և դրանց հետևանքների մեղմման ու այլ ոլորտներում հեռազննման տվյալների և GIS համակարգերի կիրառում:

ՀՈԴՎԱԾ III

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Կողմերի միջև համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

1. Տվյալների փոխանակում և գիտական ուսումնասիրությունների և համագործակցության նախագծերի արդյունքների հրապարակում,
2. Սեմինարների, աշխատաժողովների և վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
3. Համատեղ հետազոտություններ, կադրերի փոխանակում, տեխնիկական նախագծեր և աջակցություն,
4. Տարածաշրջանային համագործակցության մեխանիզմի և ենթակառուցվածքային ցանցի զարգացում,
5. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համագործակցության այլ ձևեր:

ՀՈԴՎԱԾ IV

ՆՇԱՆԱԿՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Յուրաքանչյուր Կողմ կնշանակի մեկ ներկայացուցիչ՝ որպես հիմնական կոնտակտային անձ: Ներկայացուցիչները կհստակեցնեն համագործակցության շրջանակում իրականացվելիք ծրագրերը և կսահմանեն դրանց ներդրման պլանը:

ՀՈԴՎԱԾ V

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Հուշագրի շրջանակում համագործակցությունը չի ենթադրում որևէ ֆինանսական պարտավորություն Կողմերից որևէ մեկի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նման որոշում կկայացվի առանձին դեպքերում:

ՀՈԴՎԱԾ VI

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության իրավունքները, մասնավորապես՝ այն հեղինակային իրավունքները, որոնք առնչվում են սույն Հուշագրի ներքո համագործակցության ծավալման նպատակով Կողմերին հասանելի դարձած տեղեկատվությանը, ծրագրաշարին և դիզայնին, վերապահվում են առաջնային Կողմին:

ՀՈԴՎԱԾ VII

ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Սույն Հուշագիրը կգործի համաձայն Կողմերի պետություններում գործող համապատասխան ազգային օրենսդրությանը և կանոնակարգերին, չի առաջացնի որևէ իրավական պարտավորություն և չի հանգեցնի Կողմերի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման պահանջի:

ՀՈԴՎԱԾ VIII

ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն Հուշագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած տարաձայնություն կլուծվի բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ IX

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից՝ 5 տարի ժամկետով, եթե հետագայում ուժի մեջ գտնվելու ժամկետը չերկարաձգվի կամ գործողությունը չդադարեցվի:

Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրամշակվել՝ կախված համագործակցության գործունեության արդյունքներից, փոխադարձ գրավոր ծանուցման միջոցով և կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ Կողմերից մեկի կողմից՝ 90 օր առաջ մյուս Կողմին գրավոր այդ մասին ծանուցեու միջոցով: Դադարեցումն ուժի մեջ կմտնի տվյալ ծանուցումը մյուս Կողմի ստանալուն հաջորդող օրը:

Կատարված է Երևանում և Պեկինում 2022 թվականի մայիսի 16-ին, հայերեն, չինարեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Կողմերը համաձայնում են, որ սույն Հուշագիրը կնքվում է էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային փոստով միմյանց փոխանցելով լուսապատճենված ստորագրված օրինակները, և այս եղանակով փոխանակված ստորագրված օրինակները կհամարվեն բնօրինակներ:

ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից	ԵԱՀԿԿ-ի կողմից
ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ	ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ	ՎԱՆԳ ՔՎԱՆ
նախագահ	նախագահ	գլխավոր տնօրեն